

**Բազմաշահագրգիռ մոտեցում Ուկրաինայի վերակառուցման համար. ALDA, CORLEAP  
և Չեխիայի նախագահություն**

*Միանալով «Ուկրաինայի վերակառուցմանը» թեմայով քննարկմանը*

Տեղայնացույնք և ապակենտրոնացված համագործակցությունը հանդիսանում են Արևելյան գործընկերության (ԱԷԳ) երկրներում ժողովրդավարական գործընթացի առանցքային շրջադարձային կետ և դրական մոտեցում: Այնուամենայնիվ, հաշվի առնելով Ուկրաինայում շարունակվող ներխուժումը, ճնշումը, որին բախվում է Մոլդովան նաև էներգամատակարարման առումով, կամ պատերազմը, որին պետք է դիմակայեր Հայաստանը՝ /պարզապես նշում ենք մի քանիսը/ինչպե՞ս հնարավոր կլինի հաղթահարել այդ մարտահրավերները:

**Վերակառուցման գործընթաց սկսելը, որը հիմնված է տեղական իշխանությունների, քաղաքապետարանների և քաղաքացիների ճկունության վրա**, ոչ միայն անհրաժեշտ պայման է, այլև այն ճանապարհն է, որով հարկավոր է ընթանալ ճգնաժամի ժամանակ: Հետևաբար, վերակառուցման և ժողովրդավարական գործընթացում ներգրավված յուրաքանչյուր խաղացողի դերը նախատեսելը էական է ԱԷԳ տարածաշրջանում առկա իրավիճակը հասկանալու համար:

CORLEAP-ի 11-րդ՝ տարեկան հանդիպման հաջորդ օրը «Չեխիայի Հանրապետության քաղաքների և քաղաքապետարանների միությունը» կազմակերպեց միջազգային համաժողով, որի նպատակն էր կամուրջներ կառուցել և միացնել ԵՄ-ի և Արևելյան գործընկերության քաղաքապետարանները: Ինչպես նշում է **Պետր Գանդալովիչը**՝ Չեխիայի արտաքին գործերի նախարարության զարգացման աջակցության դեպարտամենտի տնօրեն և «Ուկրաինայի վերակառուցման» II խմբի մոդերատորը, - «Ներկայացված են վերակառուցման չորս մակարդակները. *միջազգային, ազգային, ՏԻՄ և և քաղաքացիներ*»:

---

**Վերակառուցումը տեղի կունենա տեղական մակարդակում՝ պահանջելով բազմաշահառու և բազմամակարդակ մոտեցում**

---

Ընդհանուր տեսանկյունից, ահռելի պատերազմն ու անմարդկային պայմանները, որոնց այժմ բախվում է Ուկրաինան, պետք է ընկալել ավելի լայն համատեքստում. «*սա միայն տարածաշրջանային պատերազմ չէ*», - բացատրեց ԱԳ նախարարի եվրոպական հարցերով տեղակալ **Յարոսլավ Կուրֆուրստը**: Հետևաբար, այն, ինչ այժմ տեղի է ունենում, ունի տարածվող ազդեցություն՝ ներգրավելով տարբեր դերակատարների՝ սկսած Արևելյան գործընկերությունից մինչև Եվրամիություն և ամբողջ գլոբալ համակարգը:

Բացի այդ, ինչպես նշում է Եվրոպական հանձնաժողովի DG NEAR **Գեորգ Զիգլերը**, պետք է հաշվի առնել թեկնածուի կարգավիճակը, ինչպես նաև ֆինանսական կայունությունը. Ուկրաինան աջակցության կարիք ունի, որպեսզի խուսափի գնաճից և անկայուն ֆինանսական իրավիճակից բխող ցանկացած սպառնալիքից:

Եթե և՛ միջազգային, և՛ ազգային մակարդակներում իշխանությունները և կառավարությունները քայլ առաջ են անում, տեղական մակարդակը պետք է հավասարապես

հաշվի առնվի: «Ուկրաինան կատարեց իր ընտրությունը», - հայտարարել է Բուչա քաղաքի քաղաքապետ **Անատոլի Ֆեդորուկը**, որը Լուգանսկի մարզի Ստարոբիլսկի քաղաքապետ **Յանա Լիտվինովայի** հետ միասին ներկայացնում էր Ուկրաինայի երկու քաղաքապետարան: Ելնելով մարդկանց կամքից և այն դերից, որ նրանք խաղում են քաղաքապետարանների հետ, վերակառուցման գործընթացը պետք է սկսվի: «*Ես հավատում եմ մեր ընդհանուր, և շեշտում եմ ընդհանուր հաղթանակին*», - եզրափակեց պարոն Ֆեդորուկը՝ ընդգծելով այս իրավիճակում ԵՄ սերտ ներգրավվածությունն ու աջակցությունը:

Վերջապես, այս տեսլականը կիսեց նաև ALDA-ի գլխավոր քարտուղար **Անտոնելա Վալմորբիդան**, որը, հիշելով Մայդանը, շեշտեց քաղաքացիների կարևորությունը որպես «*պատմության շարժիչներ*»: Ավելին, հիմնվելով [Տեղական ժողովրդավարության գործակալությունների](#) հաջող օրինակների վրա, սկսելով Բալկաններում պատերազմի ավարտին ստեղծված գործակալություններից՝ տիկին Վալմորբիդան հաստատեց, որ «*վերակառուցումը տեղի կունենա տեղական մակարդակում՝ պահանջելով բազմաշահառու և բազմաստիճան մոտեցում. միասին աշխատել ընդհանուր ջանքերի համար*»:

\*\*\*

Հանդիպումը տեղի ունեցավ Չեխիայի Լիբերեց քաղաքում 2022 թվականի նոյեմբերի 4-ին: Ամբողջական օրակարգը տես այստեղ